ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

<<11>> Նոյեմբերի 2024թ. N ՄՈ/531-Ա

ք. Արմավիր

ԱՐՄԻՆԵ ԴԱՆԻԵԼՅԱՆԻՆ «ՓՇԱՏԱՎԱՆԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ ՎԵՐԱՊԱՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N1392-Ն որոշման 2-րդ կետով հաստատված հավելվածի 69-րդ կետով, հիմք ընդունելով «Փշատավանի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Նեյլի Ղորղանյանի 2024 թվականի նոյեմբերի 11-ի դիմումը և «Փշատավանի ամբուլատորիա» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կողմից 2024 թվականի նոյեմբերի 11-ին տրված ZZ N 261000 անաշխատունակության թերթիկը.

ո ր ո շ ո ւ մ ե մ՝

1. «Փշատավանի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Նեյլի Ղորղանյանի բացակայության ընթացքում «Փշատավանի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունների կատարումը վերապահել «Փշատավանի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ուսումնական աշխատանքների գծով տեղակալ Արմինե Դանիելյանին՝ մինչև հիմքի վերացումը:
2. «Փշատավանի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունների կատարման ընթացքում Արմինե Դանիելյանի աշխատավարձի վճարումն իրականացնել տնօրենի պաշտոնային դրույքաչափին համապատասխան:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

2024-11-11 17:43:38 GMT+4
Հավաստված է ԷԿԵՏ-ի կողմից

ՄԱՐԶՊԵՏ՝ **Դ. ԽՈՒԴԱԹՅԱՆ**